

Լեւոնի կընկերանային Մարգարիտ Թագուհին ու զաւակները, Հայոց կաթողիկոսը Պօղոս Ա, Կոստանդին Գ-ի այրին Մարիամ դչխոն, հաւատարիմ Թիկնապահը Սոհիէր ու կինը Ֆիմի կոմսուհին եւ առաջնակարգ իշխաններ, ամենը 20 հոգի: Թագաւորամայրը՝ տիկին Սուլտան՝ մեռած էր, ծերութեան մէջ չկրնալով տոկալ նեղութիւններու եւ իրարու յաջորդող զժբխտութիւններու (1):

Այսպէսով վերջացաւ հայկական չորրորդ հարստութեան վերջին ասպաւէնին յոյժ կարճատեւ(2) եւ փոթորկալից իշխանութիւնն ալ, լքուած ամէն

(1) Լեւոնի անձնասուր բլլալէն վերջը քաղաւորամօր անուցին եւ ո՛չ մէկ անգամ յիշատակուիւնր, նոյնպէս եւ Բերկիւմուրի կողմէ սրուած ապստովագրին մեջ անոր չյիշատակուիլը՝ կարծեմ բաւական են հաստատելու քե սիկին Սուլթան մեռած էր Լեւոնի անձնասուրքեմէն առաջ: Շատ հաւանական է, որ Սուլթան սիկինը քաղուած է Սսի մեջ:

(2) Չամչեան, Դիւլորիէ եւ ուրիշ պատմիչներ չեմ գիտեր ո՞ւրսից առած են Լեւոն Ե-ի մասին իրենց յերիւրած առասպելները: Ատնց հետեւելով մինչեւ հիմա ընդունուած է, քե Լեւոնի իշխանութիւնը տեւած է սասն արի, 1365-էն մինչեւ 1375, մինչդէռ ականատես պատմագիրը Դարդել բառ առ բառ գրի առնելով Լեւոնի պատմութիւնը՝ *եօրն աւիս* կը դնէ, այսինքն 1374 թ. սեպտ. 14-էն մինչեւ 1375 ապրիլի 16-ը: Բայց Դարդելի գրին յայտնութեմէն առաջ երկու հայ ժամանակագիրներ, Մարտիրոս Ղրիմեցի եւ Մինաս Համդեցի, *սասն մեկ աւիս* կը դնեն Լեւոնի իշխանութիւնը, քերեւս հաւուելով անոր Կիլիկիա մտած օրէն, որ հիշատակում է ամիս կընէ:

Ահա այս հայ ժամանակագիրներու խօսքերը .

« Յեա Կոստանդեայ որ հուսկ յետին ,
 Լեոն արքայ ողորմելին ,
 Տիրեալ ամիս տասն եւ մին ,
 Կորոյս ըզթագն ընդ ամուրն .
 Քանզի սուլթանն եղիպտոսին
 Եկեալ զերեսց զամենեւին ,
 Զպարոնն եւ զիւրսն ի միասին ,
 Եւ զթագուհին Մօրու նորին : »

Մարտ. Ղրիմեցի, տղ 60-67. *հրատի. Դիւլորիէի*
 (Rec. Cr. հս. Ա, էր. 685):

Իսկ Մինաս Համդեցին կըսէ. « Լեւոն իբր քաղաւոր նստել ժԱ. ամիս, եւ լուեալ Սուլթանն Մրտայ, եկն բազում զօրօք, եւ ըմբռնեալ Լեոն՝ Մարուն քաղուեաւն, եւ արաւ ՚ի Մսրը եւ կորոյս զԼեոն»: (*Ազգաբնակչիւն Հայոց*, էր. 51):